

# Կարևոր տեղեկություններ գաղթյալ ընտանիքների համար Medicaid եւ CHIP ծրագրերի մասին

Medicaid և Երեխաների առողջության ապահովագրության ծրագիրը (CHIP) կարող են առաջարկել անվճար կամ էժան բժշկական ապահովագրություն ձեզ և ձեր ընտանիքի անդամների համար: Անվտանգ է դիմել Medicaid-ի և CHIP-ի ծածկույթի համար:

Եթե ձեր ընտանիքում ներգաղթյալներ կան, դուք պետք է իմանաք հետևյալ կարևոր տեղեկությունները.

- Նահանգային Medicaid և CHIP գործակալությունները կարող են հավաքել, օգտագործել և բացահայտել միայն առողջապահական ապահովագրության դիմող անձի համար անհրաժեշտ տեղեկատվություն:
- Դուք երբեք ստիպված չեք լինի կիսվել քաղաքացիության կամ ներգաղթի կարգավիճակի մասին տեղեկություններով այն ընտանիքի անդամների վերաբերյալ, ովքեր չեն դիմում ապահովագրության համար: Ձեր դիմումում կարող եք նշել ընտանիքի անդամներին, ովքեր չեն դիմում ապահովագրության համար որպես «ոչ դիմողներ»:
- Medicaid և CHIP ծրագրերը ապահովում են գաղտնիության խիստ պաշտպանություն՝ ձեր և ձեր ընտանիքի մասին տեղեկությունները անվտանգ պահելու համար: Անհատը, ով օգնում է ձեր ընտանիքին դիմել ապահովագրության համար, պետք է հետևի խիստ կանոններին՝ ձեր ընտանիքի գաղտնիությունը պաշտպանելու համար: Այս անհատները ներառում են նահանգի Medicaid-ի և CHIP-ի անձնակազմը, մասնագետներ, դիմումների սերտիֆիկացված խորհրդատուներ, գործակալներ, բրոքերներ և զանգերի կենտրոնի ներկայացուցիչներ:
- Ընդհանրապես, Medicaid-ի կամ CHIP-ի նպաստների համար դիմելը կամ ստանալը, կամ առողջության ապահովագրության ծախսերի համար խնայողություններ ստանալը Marketplace-ում չի հաշվվում «հանրային վճարման» թեստում: Դա չի ազդի օրինական մշտական բնակիչ դառնալու անձի հնարավորությունների վրա: Քաղաքացիության համար հանրային վճարի թեստ չկա:
  - Մեկ բացառություն կա այն մարդկանց համար, ովքեր երկարաժամկետ խնամք են ստանում հաստատությունում պետական միջոցների հաշվին, օրինակ՝ ծերանոցում: Այս մարդիկ կարող են դժվարություններ ունենալ գրին քարտ ստանալու հարցում:
  - Վերականգնման կարճ ժամանակահատվածների համար ինստիտուցիոնալացումը չի դիտարկվում հանրային վճարի որոշման մեջ:
  - CHIP ծրագրի նպաստները չեն դիտարկվում հանրային վճարի որոշման մեջ որևէ պարագայում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք **1-877-KIDS-NOW (1-877-543-7669)** կամ այցելեք **«Գտնել ապահովագրություն ձեր ընտանիքի համար»** (**“Find Coverage for Your Family”**) բաժինը՝ **InsureKidsNow.gov**: Եթե դուք կամ ձեր ընտանիքի որևէ անդամ չի կարողանում խոսել, կարդալ, գրել կամ հասկանալ անգլերեն, հասանելի է անվճար ռեզուրսներ ձեր մեզուս:



InsureKidsNow.gov

